

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ
ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՋԻՎԱՆՈՒ ԵՐԳԵՐՈՒՄ

ԹՈՎՄԱՍ ՊՈՂՈՍՅԱՆ

Ծանոթանալով Ջիվանու ստեղծագործություններին՝ ակնհայտ է դառնում, որ նա անմիջականորեն արձագանքել է ժամանակի հայ հասարակությանը հուզող խնդիրներին և որպես իր ժողովրդի հավատարիմ զավակ ու ճշմարիտ հայրենասեր՝ պատրաստ է եղել իր անձով ու քնարով ծառայել նրան:

Հայ ժողովրդի ազատագրական պայքարին նա մասնակից է եղել ոչ միայն իր երգերով: Վավերագրերը վկայում են, որ աշուղը բարեկամական, ընկերական կապեր է ունեցել Ալեքսանդրապոլում կազմակերպված «Բարենպաստակ» հայրենասիրական ընկերության անդամների հետ¹: Ակադեմիկոս Մ. Ներսիսյանը որոշակի տվյալներ է հաղորդում Ջիվանու հայրենանպաստ գործունեության վերաբերյալ: 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո Հայաստանում ծայր առած կամավորական շարժման ոլորտում ընդգրկված էր նաև սահմանամերձ Ալեքսանդրապոլը: Քաղաքում ընտրվում է հինգ հոգուց բաղկացած մի հանձնաժողով՝ կամավորական խմբեր կազմակերպելու ու նրանց գործունեությունն ուղղորդելու նպատակով: Այդ հանձնաժողովի անդամ է ընտրվում նաև Ջիվանին²:

Ջիվանին, ծնված ու մեծացած լինելով Բարձր Հայքից գաղթածների միջավայրում, հոգու խորքում մշտապես կրել է կարոտն առ նախնիների բնօրրանը: Կարոտի և հույսի, սիրո ու նվիրումի հույզերով են համակված Կարինին («Արգյուրյումին») նվիրված երկու ստեղծագործությունները՝ «Կարնեցու երգը» և «Նվեր Կարնո հայերին», որոնցում քաղաքի ու շրջակա սրբավայրերի գորությանը ապավինած՝ գրում է.

Հին քաղաք ես, բնականեն անահ ես,
Միջիդ մասխուլովը էլին կշահես,
Հորս, պապիս ոսկորները կպահես,
Ինձ ալ էլիր դու գերեզման, Արգյուրյում³:

Արևմտահայ բնաշխարհի հետ արմատներով կապված լինելը նաև անձնական մոտիվներ է հաղորդել ազատագրական պայքարին աջակցելուն: Ցարական իշխանություններին հայտնի է եղել հայդուկային խմբի հետ նրա կապը, որի համար Ջիվանին մշտապես գտնվել է ոստիկանության հսկողության ներքո, ենթարկվել է հետապնդումների, արգելվել են նրա ելույթները, բռնագրավվել նվագարանը: Ոստիկանի մասին երգում ասում է.

¹ Վ. Ա. Պ ա ր ս մ յ ա ն. Հայ ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1959, էջ 132:

² Մ. Ն ե ր ս ի ս յ ա ն. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 2002, էջ 159:

³ Ջիվանու քնարը, կազմեց, տեքստը համեմատեց և ծանոթագրեց Ա. Սահակյանը, Երևան, 1959, էջ 751:

Ո՞ւր գնամ, որ չտեսնեմ ես
Անգույթ ոստիկանի երես,
Անխղճմտանք և պոտկերես,
Լկտի ոստիկանի երես⁴:

Ջիվանու աշուղական խմբի մշտական անդամ, աշուղ Ջամալու որդին՝ ժողովրդական արտիստ Շարա Տայյանը, իր հուշերում գրում է. «Մեր թաղամասի ոստիկանապետ Գլերովը մի հայատյաց մարդ էր <...> Այդ Գլերովն էր, որ ամիսը մի երկու անգամ բռնագրավում էր Ջիվանու խմբակի երաժշտական գործիքները և արգելում աշխատել՝ պատճառաբանելով, թե աշուղները երգում են ազգային ու հեղափոխական երգեր»⁵: Այնուհետև շարունակում է. «Արհեստավորներն ու խանութպանները փող էին հավաքում, բանակցում Գլերովի հետ, կաշառում: Ապա նորից երգում էր Ջիվանին»:

Ջիվանու հայրենասիրական, քաղաքական ու ֆիդայական բնույթի երգերի տպագրության հարցում բացասական դեր է խաղացել գրաքննությունը: Այս կամ այն երգի վերաբերյալ գոյություն ունեցող որոշ վկայություններ հաստատում են այդ կարծիքը: 1900 թ. Ջիվանու, Շիրինի, Հագիրիի, Ջամալու և այլ աշուղների ստեղծագործություններից կազմված երգերի մի տետրի վրա, որը բաղկացած էր 110 էջից, գրաքննիչը մակագրել է՝ արգելել: Կարապետ Դուրգարյանը հիշատակում է հետևյալ փաստը. «Ջիվանու «Ով սիրուն, սիրուն» երգի չորրորդ տողն սկսվում է «թագ ու պսակը» բառերով. Կովկասի գրաքննիչ (ցենզոր) Ա. Քիշմիշը կարմիր թանաքով ուղղել է «փառք ու պատիվը», որից հետո բոլոր հրատարակություններում պահպանվել է վերջին ձևը»⁶: Հայտնի է ցարական ու խորհրդային գրաքննիչների մոտեցումը, որը հիմք է տալիս ասելու, թե Ջիվանու վերը նշված երգերը պարզապես չէին հրատարակվի իբրև քաղաքական առումով աննպատակահարմար, եթե չասենք վտանգավոր:

Արևմտահայության ազատագրական պայքարի մոտիվները Ջիվանու ստեղծագործություններում հանդես են գալիս խոհական, խրատական, սիրային, պանդխտության, սոցիալական, պատմաքաղաքական և այլ մոտիվների ու թեմաների հետ միահյուսված՝ իբրև մի ամբողջական համակարգ: Հաճախ դժվար է լինում այս կամ այն ստեղծագործությունը բնութագրել ու քննարկել մեկ մոտիվի շրջանակներում: Իր աշխարհայացքով ու գործունեությամբ Ջիվանին հավատարիմ մնաց բանաստեղծի կոչմանն ու ընտրած ուղուն՝ իբրև ճշմարիտ հայրենասեր, լայնախոհ ու անձնվեր հայ մարդ՝ հպարտ իր հայությամբ ու կյանքը զոհելու պատրաստակամությամբ: Գործունեության սկզբնական շրջանում (1883 թ.), դեռ ոչ այնքան հայտնի աշուղ, նա գրում է.

Քաղցած, ծարավ հայ կմնամ մինչ ի մահ,
Փառամոլ, ազգուրաց իշխան չեմ լինի,
Եթե ինձ խոստանան գայիսուն և գահ,

⁴ Նույն տեղում, էջ 257:

⁵ Շ. Տ ա յ յ ա ն. Դեպքեր, դեմքեր, մտքեր, Երևան, 1973, էջ 32:

⁶ Կ. Դ ո լ ր գ ա ր յ ա ն. Շիրակի հայ աշուղները, Երևան, 1986, էջ 183:

Չեմ ընդունիլ, ազգակործան չեմ լինի⁷:

Ջիվանու երգերում Արևմտահայաստանի առկա անմխիթար վիճակը ներկայացվում է տարբեր տեսանկյուններից և ըստ այդմ՝ աշուղի զգացմունքներն ու տվայտանքները արտահայտվում են տարբեր երանգավորմամբ:

Ստեղծագործական կյանքի առաջին շրջանում Ջիվանին հայրենիքի հանդեպ անհուն սիրտ զգացմունքները, նրա դառը վիճակի պատճառած ցավն ու մորմոքը արտահայտել է մոր կերպարի միջոցով: «Մայր իմ» ստեղծագործության մեջ (1886 թ.) մայրը Մայր Հայաստանն է՝ անկոչ հյուրերի, տնփեսաների, «այլակրոն պետերի և այլ նեղելոց» ձեռքից տառապած ու տառապող, ծննդավայրը օտարներին թողած, որդիները գերված, մնացողների ծխերը մարած, լույսը խավարած մի դժբախտ կին: Աշուղը հորդորում է այդ դժբախտ կնոջը չհուսահատվել, ապավինել Աստծուն⁸:

Ջիվանին հարազատ ժողովրդի վիճակին անդրադարձել է նաև Բեռլինի վեհաժողովի կողմից ընդունված 61-րդ հոդվածի կապակցությամբ: Հայ հասարակության որոշ շրջաններ դեռևս հույսեր էին փայփայում այդ հոդվածի և Եվրոպայի ազատագրական առաքելության նկատմամբ: Ջիվանին 1904 թ. իրատես քաղաքագետի խորաթափանցությամբ նկատում է.

Տասնըվեց համարը⁹ ձեռքիցս առան,
Նախանձները վա[թ]սունումեկ դարձրին,
Նենք պիղատոսները ինձ բժիշկ դառան,
Հին ցավերուս վրա նորից ցավ դրին¹⁰:

⁷ Աշուղ Ջիվանի. 150 Անհայտ երգեր, աշխատասիրությամբ Թ. Պողոսյանի, Երևան, 1996, էջ 8:

⁸ Աշուղ Ջիվանի. Անհայտ երգեր (այսուհետև՝ ԱՋԱԵ), Երևան, 2009, էջ 367:

⁹ Նկատի ունի Սան-Ստեֆանոյի համաձայնագրի 16-րդ հոդվածը:

¹⁰ ԱՋԱԵ, էջ 548:

«Անօգուտ շրջան, համդ, հոտդ անիծեն» սկզբնատողով ստեղծագործության մեջ (1904 թ.) Ջիվանին այլաբանորեն անդրադառնում է բանահյուսական երանգ ստացած «թղթե շերեփի» պատմությանը.

Ջիվա՛ն, հարուստները կազմեցին սեղան,
Առաջ բերին կերակուրներ զանազան,
Բաղտավոր ազգերը կերան, կշտացան,
Հայր մինչև անգամ փշրանք չը տեսավ¹¹:

«Բաղտավոր ազգեր» ասելով՝ աշուղը նկատի ունի բալկանյան ժողովուրդներին, որոնք Բեռլինի վեհաժողովի դաշնագրով ազատվեցին թուրքական լծից: Նա քանիցս ուղղակի հիշատակում է այդ ժողովուրդներին հականե հանվանե. «Ինչպես բուլղարներուն, սերբերուն արիք»¹²:

Քաջատեղյակ լինելով մեր ժողովրդի պատմությանը՝ աշուղը գիտակցում է գաղթի և պանդխտության վերահաս վտանգը: «Հարց ու պատասխան» խորագիրը կրող երգում (1905 թ.) այն հարցին, թե՛

Ինչ բան հայերին մեծ հարված է տվել,
Դարձրել է ավեր դրախտ երկիրը¹³ ...

աշուղը հետևյալ պատասխանն է տալիս.

Գաղտականությունն է մեծ հարված տվել,
Դարձրել է ավեր դրախտ երկիրը...

XIX դարավերջին և XX դարասկզբին Արևմտյան Հայաստանում հայերի զանգվածային կոտորածներն ու Անդրկովկասում ստեղծված քաղաքական աննպաստ մթնոլորտը Ջիվանին վերապրեց չափազանց ծանր: Եղավ մի շրջան, երբ աշուղը կարծես թե վերջնականապես հուսահատվեց. նրան թվում էր, որ ամենակարող Աստվածն անգամ ի գործու չէր փոխելու հայերի ճակատագիրը: 1895 թ. գրում է մի երգ, որի ամբողջական բնագիրը, ցավոք, հնարավոր չէ վերականգնել և որի վերնագիրը «Տեր ողորմյա» էր: Հետագայում աշուղը այն դարձրեց «Ազգիս տեր ողորմյան»՝ երգին տալով առավել ընդհանրացնող համազգային բնույթ: Փրկության ուղի, ելք չգտնելով՝ Ջիվանին այս ստեղծագործության մեջ Աստծուց ողորմություն է հայցում իր խայցալ որդու՝ հայ ժողովրդի համար.

Տկարներուն տեր ու պաշտպան,
Աստված հզոր, լեր պահապան,
Վերջի օրն է հայ ազգության,

¹¹ Նույն տեղում, էջ 153:

¹² Նույն տեղում, էջ 524:

¹³ Նույն տեղում, էջ 299:

Տեր ողորմյա, տեր ողորմյա¹⁴:

Ավելորդ չենք համարի նշել, որ երկու տասնամյակ անց ազգային մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանը Մեծ եղեռնին կարճազանքի նմանաբնույթ «Հոգեհանգիստ» բանաստեղծությամբ: Ազգի ողբերգությամբ ապրող երկու զգայուն, մեծ հոգիները միանման են ընկալում ու վերապրում մայր ժողովրդին հասած աղետը:

Երգերում տեղ գտած Ջիվանու խոհերն ու մտորումները, փրկության ելքի որոնումները հանգեցնում են սեփական ուժերին ապավինելու գաղափարին, ինչն էլ տիրապետող գաղափար էր դառնում հայ հասարակական շրջանակներում: 1902 թ. Շուշիում գրած «Որսորդը քեզ հալածում է» սկզբնատողով երգում նա ասում է.

Հույսդ դիր քու ուժիդ վրա,
Ասպարեզից հետ մի մնա,
Այժմ ողբի լսող չկա,
Մի անիլ լաց ու թաց, եղնիկ¹⁵:

Ուժի, քաջության, զինված պայքարի գովքը դառնում է Ջիվանու հատկապես 1900-ական թվականներին հորինած երգերի հիմնական մոտիվը: Աշուղը փաստում է, որ հայ մարդը ևս պետք է պայքարի իր իրավունքների համար.

Շատ շատերուց քաջ ենք, վեր ենք,
Մերթ կովենք, մերթ կրհամբերենք,
Մենք մեր ուժով ձեռք կբերենք
Մեզ համար օթևան, քեռի¹⁶:

Ջիվանու ստեղծագործություններում ուժը իմաստավորվում է զենքի ու քաջության միջոցով: Աշուղը կոչ է անում ուժին ուժով դիմագրավել, չարին զենքով պատժել, հորդորում է հայ ժողովրդին զինվել ու սեփական ուժերով լուծել ազգային խնդիրները և կարևորը՝ պաշտպանվել: Ջիվանին զինված ինքնապաշտպանությունից բացի այլ ուղի չի տեսնում: Հարևանը վայրենի է ու բիրտ, կեղծավոր, ուխտադրուժ ու անկիրթ.

Տեսնում ես՝ դրացիդ բարեբարո չէ,
Պիտի ուժդ ցույց տաս, որ երկյուղ կրե¹⁷:

«Խրախույս նոր զինվորներին» երգում Ջիվանին ցավով նշում է, որ հայ մարդը զենք չի կրում, այն գործածել չգիտի.

Ամբողջ վեց հարյուր տարի է թմրած ոչխարի նման,

¹⁴ Նույն տեղում, էջ 556:

¹⁵ Նույն տեղում, էջ 505:

¹⁶ Նույն տեղում, էջ 430:

¹⁷ Նույն տեղում, էջ 290:

Ամեն խուժողուժ մեզ տանելով լցնում է սպանդարան,
Տեսել եմ հայ գյուղացիներ հարյուրավոր սայլապան,
Ոչ մեկի մոտ չէ գտնվել մի սուր, կամ մի հրացան,
Ուրեմն տանք մեր որդիքը թող գնան լավ հմտանան,
Մովորին զենք գործածելը, բարձրանա հայ ազգը վեր¹⁸։

Մեծ աշուղի երգերի մի սովոր խումբ վերաբերում է XIX–XX դարի ազատագրական պայքարի մասնակից անհատ հերոսներին՝ ֆիդայիներին։ Նրանք ոչ միայն սեփական ուժերով ազգային խնդիրը լուծելու գաղափարի կրողներն են, այլև այդ ուղին ընտրած, իրականության մեջ այն գործադրողները։ Ջիվանու երգարվեստում նրանց հայտնվելը պատահական չէ։

Երգերի այս խումբը պատմական բնույթ ունի։ Դրանք հորինված են իրական հերոսների, անհատների մասին, որոնք ապրել ու մարտնչել են իրական հանգամանքներում հանուն որոշակի գաղափարի՝ հայրենիքի ազատագրության ու մայր ժողովրդի պաշտպանության։ Մեր երգարվեստի պատմությունից, գրավոր թե՛ բանավոր, հայտնի գովքի երգերի ավանդներով ստեղծված այս ստեղծագործությունները ևս գովքեր են։ Ջիվանու գովքի, փառաբանության ու մեծարման ելակետը ոչ միայն հերոսների անհատական յուրահատկություններն ու արտաքին բարեմասնություններն են, այլ գերազանցապես նրանց անձնվեր հայրենասիրությունը, քաջությունն ու հավատարմությունը գաղափարին ու ընտրած ուղուն։ Այդ երգերի հերոսների մի մասը (Գոլոշյան, Անդրանիկ, Աղբյուր Սերոբ) ծանոթ է ու հայտնի ոչ հեռու անցյալի պատմությունից։ Նրանք մեծարվել ու փառաբանվել են նաև ժողովրդական երգիչների կողմից։ Սակայն Ջիվանու երգերը ինքնատիպ են, աչքի են ընկնում ոչ միայն աշուղական երգարվեստի տաղաչափական կանոնների հմուտ գործադրմամբ, այլև ճոխ ու հարուստ լեզվով, կուռ կառուցվածքով, իրական մանրամասների հավաստիությամբ։

Հերոս, հայրենասեր անհատներին նվիրված երգերի շարքում, ժամանակագրական առումով, առաջնությունը պատկանում է Ալեքսանդր (Վարդան)¹⁹ Գոլոշյանին նվիրված ստեղծագործությանը, որի սկզբնատողն իսկ բնութագրական է. «Հայրենիքի փրկության դու առաջին նահատակ»։ Հիրավի, Գոլոշյանը 1880-ականներին սկսված ազատագրական շարժման առաջին գործիչներից էր, առաջին նահատակներից։ Երգի ստեղծման տարեթիվը հայտնի չէ, ենթադրվում է, որ այն գրվել է նրա սպանության լուրի ազդեցության ներքո։ Ջիվանին հուզական շեշտադրությամբ ներկայացնում է հերոսի կարճատև կյանքի հիմնական փուլերն ու դրվագները.

Ուսումդ նոր ավարտած, դու քսանհինգ տարեկան,
Գրիչը վայր քցելով՝ ձեռդ առար հրացան,
Մտար ութը ընկերով ասպարեզը փորձության²⁰...

¹⁸ Նույն տեղում, էջ 440։

¹⁹ Ա. Գոլոշյանը (1867–1889) մականուն էր ընտրել Բաֆնու օձենթի նշանավոր հերոսի անունը՝ նկատի ունենալով նրա գործունեությունն ու գաղափարը։

²⁰ ԱՁԱԵ, էջ 387։

Այնուհետև աշուղը պարզում է Գոլոշյանի գործունեության նպատակը.

Ուրբ մարդով կամեցար մի ահագին բան անել,
Արյունառուշտ քրդերը հայրենիքից դուրս վանել,
Ուզում էիր այսպիսով հայերուն ոտքի հանել,
Վախկոտներու սրտերում քաջության սերմը ցանել²¹։

Ջիվանին Գոլոշյանին անվանում է երկրորդ Վահան Մամիկոնյան, նրա հոգին կարգում Սրբոց Վարդանանց դասում:

Երգում դառնությամբ է մատնանշվում, որ Վարդանին ու նրա ընկերներին ավագակ են անվանում.

Մեռար պատերազմի մեջ՝ իբր անգութ ավագակ,
Բայց ո՛չ, գիտցողը գիտե՝ ունեիր այլ նպատակ²²։

Գոլոշյանը փորձում էր մի լուցկով անտառի մեջ կրակ գցել, ասում է աշուղը, մեկ ճիպոտի ուժով գերանին հարվածել, բայց հավատացած է. «Քո թափածո արյունով քաջեր ծնին շատ, բազում», և եթե՝

Քեզ նման հարյուր հազար ունենայիր երանի՝
Կարելի է գլուխ գար քո գործդ այն ժամանակ²³։

Նկատենք, որ Ա. Գոլոշյանի անվան շուրջ հորինվել են նաև ժողովրդական երգեր²⁴։ Թումանյանի «Հին կոիվը» պոեմը ևս նվիրված է Գոլոշյանին²⁵։

Ջիվանու սիրելի հերոսը, գաղափարակիրը Անդրանիկն է, ով անձնական հատկություններով համապատասխանում էր աշուղի երևակայությամբ ստեղծածին: «Ուղերձ» երգում (1904 թ.) նա հերոսին բնութագրում է իբրև սերմնացան և դա է համարում Անդրանիկի դերը հայ ժողովրդի պայքարի ու մաքառման ճանապարհին²⁶: Այն կարելի է դասել ավանդական գովքի երգերի շարքին, առաջին տողն իսկ այդ է վկայում. «Ազգի հարազատ զավակ, անգուգական Անդրանիկ»:

1900-ական թվականների սկիզբն այն ժամանակաշրջանն էր, երբ Անդրանիկը մի խումբ անձնագոհ քաջերի գլուխն անցած անհավասար կռիվներ էր մղում թուրք բռնապետության դեմ Սասունում, Մշո դաշտում, Առաքելոց վանքում և, չնայած ռուսական իշխանության հարուցած արգելքներին, այդ կռիվների արձագանքները հասնում էին Թիֆլիս ու Բաքու, Երևան ու Ալեքսանդրապոլ, Շուշի ու Կարս, ոգևորում ժողովրդական երգիչներին ու բա-

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում, էջ 387:

²³ Նույն տեղում:

²⁴ Ա. Ղ ա գ ի յ ա ն. Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր, Երևան, 1989, էջ 22, 75–76:

²⁵ Ա. Ի ն ճ ի կ յ ա ն. Հովհաննես Թումանյան, Երևան, 1969, էջ 142–144, 197–200:

²⁶ ԱՁԱԵ, էջ 107:

նաստեղծներին: Նույն՝ 1904 թ., աշուղ Շերամը նույնպես Անդրանիկին նվիրված երգ է հորինել²⁷: Վերջինս լայնորեն տարածված է և համարվում է իբրև բանահյուսական ստեղծագործություն²⁸: Եվ կարծես երկու արվեստակից աշուղներ մրցում են՝ ժողովրդական հերոսին արժանավայել գնահատականներով փառաբանելու, մեծարելու ասպարեզում: Նրանց ստեղծագործությունները համեմատելիս դժվար է որևէ մեկին նախապատվություն տալ: Ջիվանին Անդրանիկին նոր Վահան է անվանում, անմահ Սերոբ փաշայի հոգու և ոգու կրողը, հորդորում է նրան առաջ ընթանալ, մահից չվախենալ, քանզի «նման անդրանիկներ հայերու մեջ շատ կան»: Ժողովրդական հերոսին գովերգում է ամենավսեմ մակդիրներով, արժանի համարում դափնեպսակի ու հերոսի համբավի, որ իրավամբ վայելում է: Աշուղը կարևորում է մի հանգամանք. պատվի ու հարգանքի, մեծարելու ու գովաբանելու հիմքը հայրենիքին նրա մատուցած ծառայությունն է, նրա անձնագրի գործը: Ըստ Ջիվանու՝ Անդրանիկի ծառայության նշանակությունը սերմնացան լինելն է, ուղի բացելը, հարթելը.

Հայրենիքի սրտի մեջ բացիք ահագին ակոս,
Անպարտելի երկրագործ, մեծ սերմնացան, Անդրանիկ²⁹:

Անդրանիկին նվիրված երգում, իբրև «Հայի պարծանք», ներկայացվում են նաև Սասնո աննկուն, անվեհեր քաջերը, որոնց ընկերն ու գորավարն է նա:

Ջիվանին հավատացած է, որ հետնորդները Անդրանիկի ծառայությունը կգնահատեն ըստ արժանվույն և կարծես մարգարեանում է.

Երփ կունենան հայերը ինքնուրույն կյանք, նոր ծնունդ,
Շիրմիդ վրա կը կանգնեն կոթող-արձան, Անդրանիկ³⁰:

1907 թ. հորինած մի երգում, վերնագրված «Հայ ժողովրդին», Ջիվանին գրում է Գևորգ Չաուշի գոհվելու մասին, որը տեղի է ունեցել նույն թվականի մայիսի 27-ին, Սուլուխ գյուղի մերձակայքում (Մշո դաշտ) թուրք զինվորների հետ ունեցած զինված ընդհարման ժամանակ.

Ապօրինի գավակ է այն անհատը,
Որ ազգին ու ցեղին ուզում է վատը,
Գեորգ Չավուշի պես քաջ հարազատը,
Ազգի պատվի համար մահ է ստացել³¹:

Արևմտահայերի ազատագրության համար թուրքական բռնակալության դեմ անձնուրաց պայքարի ելած հերոսներից է կողբեցի Սարգիս Հակոբյանը, որի գործի ու ողբերգական

²⁷ Շ եր ա մ. Երգեր, Երևան, 1969, էջ 15:

²⁸ Ա. Ղ ա գ ի յ ա ն. նշվ. աշխ., էջ 173:

²⁹ ԱՋԱԵ, էջ 107:

³⁰ Նույն տեղում:

³¹ ԱՋԱԵ, էջ 432:

վախճանի մասին է Ջիվանու «Կողբ գյուղացի դու քաջ Սարգիս Հակոբյան»³² սկզբնատողով երգը: Երգի հերոսը՝ քիչ հայտնի անուն է, սակայն իր սխրանքով արժանացել է հայրենասեր աշուղի ստեղծագործական ներշնչանքին:

Երգի հորինման տարեթիվը հայտնի չէ. դատելով երգում հիշատակված դեպքերից, կարելի է ասել, որ այն ստեղծվել է 1900–1901 թթ.:

Հազար իննը հարյուր թվին եղավ ջանք,
Դեպի երկիր սկսել նոր արշավանք,
Խան Պետրոսն էր խմբին տվող հրահանգ,
Դուն էլ նույնպես գործ դրիր մեծ աշխատանք,
Անցաք սահման, կատարեցիք զպոսանք,
Խաստուր գյուղը արեցիք ձեզ իջևան³³:

Ջիվանին երգում ներկայացնում է հերոսի հետ կապված, նրա գործունեությանը վերաբերող տեղեկություններ, որոնք հավաստի են, իրական: Սարգիսը 1892 թ. զինվորագրվում է Բլեճյանի հայդուկային խմբին՝ իր պարտքը հայրենիքի հանդեպ կատարելու համար.

Եկար Կավգաս իննըսուն ու երկուսին,
Զինվոր գրվար Բլեճյանի մեծ խմբին,
Խաղաղ կյանքը չը սիրեց քու մեծ հոգին,
Վեհ սուրբ գործին [հ]անձնվեցար զլիտվին,
Կատարելու պարտք ունեիր ազգային,
Քեզ կանչում էր Հայրենիքը սրբազան³⁴:

Այնուհետև Սարգիսը 1900 թ., անսալով արևմտահայ եղբայրներին փրկելու կանչին, զինվորագրվում է Խան Պետրոսի խմբին, որը նոր արշավանք է ձեռնարկում դեպի Արևմտյան Հայաստան: Խումբն իջևանում է Խաստուր գյուղում, Խաչատուր վարժապետի զմում: Խումբն այն ամբողջ է դարձնում և այդտեղ էլ զլիտվին մատնության գոհ դառնում: Երգը պահպանվել է անավարտ վիճակով: Նրա հերոսը մեծարվում է Վարդանանց ճուտ, Վարդանիկ, «անվեհեր քաջ, պատիվ բերող հայության» արտահայտություններով:

Ջիվանու «Կողբ գյուղացի...» սկզբնատողով երգը վիպական-պատմական բնույթ ունի և, ըստ էության, տալիս է XIX դարի վերջին տասնամյակում և XX դարի սկզբներին Անդրկովկասում ծնունդ առած հայկական հայդուկային խմբերի կազմավորման, գործունեության ու վախճանի բնորոշ պատկերը:

Ջիվանու մի շարք երգերում բնորոշ պատկերներով ներկայացվում է թուրքական բանտը, որը մի կատարյալ դժոխք, տանջարան է եղել հայ մարդու համար: «Թուրքիայում բան-

³² Նույն տեղում, էջ 357:

³³ Նույն տեղում:

³⁴ Նույն տեղում:

տարկված մի հայ երիտասարդի ուղերձը յուր նշանածին»³⁵ (1897 թ.) վերնագրով և «Թուրքական բանտերում երկար ժամանակ»³⁶ սկզբնատողով երգերը վերաբերում են այդ թեմային:

Ռուս-թուրքական սահմանն անցած հայդուկները հաճախ հայտնվում էին թուրքական բանտերում և նրանց փրկելը բացառիկ երևույթ էր: Այնքան արտառոց և ուրախատիթ է եղել հայդուկ Խաչատուր Տեր-Կարապետյանի՝ Ուսուլ Խաչոյի թուրքական բանտից ողջ-առողջ ազատվելը, որ Ջիվանին այդ իրողության կապակցությամբ երգ է հորինել: Հերոսը՝ Ուսուլ Խաչոն (Ուսուլ Խեչոն)³⁷, իր ժամանակի համբավավոր հայդուկներից էր: Ցավոք, մեզ հայտնի չեն նրա բանտարկվելու և ազատվելու մանրամասները: Երգում միայն հիշատակվում են թռուցիկ տեղեկություններ. նրա ծագումը, որ ախալցխացի է, «լավ ծնողաց որդի», Տեր-Կարապետյան գերդաստանի «անթիքա սերունդ» և հայդուկապետ Խանի ընկերը: Ջիվանին Ուսուլ Խաչոյին նույնպես մեծարում է իբրև գործի, գաղափարի «թունդ սիրահար, նման անմահ Վարդանին»: Բանտից Տեր-Կարապետյանի ազատվելը Ջիվանին հրաշք է համարում, Աստծո կողմից տնօրինած.

Ով էր տեսել այսպես հրաշք, այսպես բան,
Հանկարծակի դներն հրեշտակ դառնան,
Ազատ պրծար անգութ դժոխքում դաժան,
Հոգի առար դու վերստին, Խաչատուր³⁸:

Ամփոփենք. Ջիվանու վերոհիշյալ երգերը ներքին միասնություն կազմելով XX դարասկզբի այլ հեղինակների, այդ թվում՝ Թումանյանի ու Բսահակյանի համաբնույթ ստեղծագործությունների հետ, արևմտահայության մղած ազատագրական պայքարի մասին արևելահայ միջավայր հասնող լուրերի և առկա ոգևորության ու ակնկալիքների հարազատ արձագանքն են:

ОТРАЖЕНИЕ ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ ЗАПАДНЫХ АРМЯН В ПЕСНЯХ ДЖИВАНИ

ТОВМАС ПОГОСЯН

Резюме

Ашуг Дживани был связан с добровольческими группами, направлявшимися в Западную Армению, что не ускользнуло от внимания царских властей. Его произведения подвергались цензуре, из них вычеркивались строки и отрывки, касающиеся освободительной борьбы армянского народа. Написанные на эту тему стихи ашуга подразделяются на две группы: произведения об общей освободительной

³⁵ Նույն տեղում, էջ 558:

³⁶ Նույն տեղում, էջ 276:

³⁷ Ուսուլ նշանակում է զգույշ:

³⁸ Նույն տեղում, էջ 276:

борьбе и стихи, посвященные отдельным героям-фидаянам. Многие из последних стихов были написаны на основе конкретных исторических событий.

REFLECTION OF THE LIBERATION MOVEMENT OF WESTERN ARMENIANS IN JIVANI'S SONGS

TOVMAS POGHOSYAN

Summary

Ashugh Jivani was connected with voluntary groups departing for Western Armenia, which did not escape the notice of royal power. His works have been subjected to censorship; various lines and excerpts regarding the liberation movement had been removed. Related to this topic ashugh's poems are divided into two groups: those regarding the general struggle, and poems, devoted to separate heroes-fedayees. Many of his last poems were created on the basis of certain historical events.